ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 101

ԳԱԲՐԻԵԼ ՄԱՏԻՆԸԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով "Կաթնագործ" այգեգործական ընկերության կողմից Սամվել Մոսինյանին տրված այգեգործի վկայականը, Սամվել Մոսինյանի դիմումը սեփականության իրավունքը ձևակերպելու մասին և, քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չի առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Գաբրիել Մատինըանին հատկացված Լերմոնտովո համայնքի 06-043-0113-0012 ծածկագրով 0.0626հա բնակավայրերի բնակելի կառուցապատման այգեգործական հողամասի հողհատկացման հիմքերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 102

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0234-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 08.04.2004 թ-ի 457-Ն որոշմամբ, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1 և 7-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով քաղաքացի Արմենակ Գրիգորի Պետրոսյանի դիմումը սեփականության իրավունքի պետական գրանցում ստացած 06-043-0234-0002 ծածկագրով 1,452հա հողամասի կադաստրային քարտեզի և ՀՀ կառավարության 29.04.2021 թ-ի թիվ 698-Ն որոշմանը համապատասխանեցնելու մասին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքի կադաստրային քարտեզի 06-043-0234-0002 ծածկագրով Արմենակ Գրիգորի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 1,452հա հողամասը համապատասխանեցնել կադաստրային քարտեզին և այն վերագրանցել որպես արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գ/տ արտադրական հողամասի:

2.Ըստ անհրաժեշտության վերը նշված ուղղումներն իրականացնել նաև կադաստրային գործում առկա փաստաթղթերում:

3.Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ, Լերմոնտովո համայնք, 3փողոց, 2/3 հողամաս:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿ-ի Լոռու մազային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**